ՀԱՅԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հունվար–հունիս 2024



Հիմնական տնտեսական ցուցանիշեր

Գծապատկեր 1 Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %
2024թ. հունվար–հունիս, աճողական



Գծապատկեր 2 ՏԱՑ–ին ճյուղերի նպաստը, տոկոսային կետ



- **Արդյունաբերություն:** Արդյունաբերության աճը 2024թ. հունվար հունիսին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 18.2%: Աճին դրական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերությունը, որի աճը կազմել է 27.7%: Բացասական ազդեցություն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը, որի կրճատումը կազմել է -9.2%:
- **Առևտուր:** Ներքին առևտրաշրջանառության աճը 2024թ. հունվար–հունիսին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 22.9%: Ավտոմեքենաների առևտրի ծավալը նույն ժամանակահատվածում նվազել է –8.7%–ով:

- **Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ծավալի աճը 2024թ. հունվար–հունիսին կազմել է 4.3%,** իսկ գյուղատնտեսությա ծավալի աճը՝ 4.0%: Գյուղատնտեսության աճին դրական է նպաստել բուսաբուծության 10.6%, անասնապահության 7.1% և ձկնորսության 7.2% աճը:
- **Շինարարություն:** Շինարարության աճը 2024թ. հունվար–հունիսին կազմել է 15.7%: Շինարարության ծավալի աճին նպաստող հիմնական աղբյուրները հանդիսացել են բնակչության միջոցներով շինարարության 58.2% աճը և բյուջեի միջոցներով շինարարության 58.8% աճը:
- **Ծառայությունների ծավալն աճել է 4.4% –ով:** Աճ է գրանցվել ծառայությունների բոլոր տեսակների գծով, բացառությամբ «տրանսպորտ» և «տեղեկատվություն և կապ» ծառայության տեսակների, որոնք կրճատվել են համապատասխանաբար -16.8% և -8.3%–ով: Աճ է գրանցվել հետևյալ ենթածառայությունների գծով՝ «կացություն և հանրային սննդի կազմակերպում»՝ 8.2%, «ֆինանսական և ապահովագրական գործունեություն»՝ 19.0%-ով, «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ աճել է 4.6%-ով և այլն:

Զբոսաշրջություն

Գծապատկեր 3 Ժամանած միջազգային զբոսաշրջիկների քանակ. , հազար



Գծապատկեր 4 Զբոսաշրջիներ Ռուսաստանից



Զբոսաշրջության դինամիկա (2023-2024 1-ին կիսամյակ)

- 2024թ. հունվար–հունիսին զբոսաշրջիկների քանակը կազմել է 946.162, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով -6.1%–ով
- 2024թ. 1-ին կիսամյակում Ռուսաստանին բաժին է ընկել ընդհանուր զբոսաշրջիկների 41.8%: 2023 թվականի նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին էր ընկել 51.5%–ը:
- Ոչ էական կրճատումը հիմնական հիմնականում պայմանավորված է առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող Ռուսաստանից զբոսաշրջային հոսքի նվազմամբ:

Զբոսաշրջություն



Ծագման երկիր

Հունվար–հունիս 2024

Երկիր	Զբոսաշրջիկներ ի քանակ	Աճ/կրճատում
Ռուսաստան	395,688	-23.8%
Վրաստան	126,927	10.2%
Իրան	69,252	18.3%
Հնդկաստան	24,949	2.1 անգամ
ԱՄՆ	17,042	3.3%
Ֆիլիպիններ	13,183	49.4%
Ուկրաինա	12,663	4.4%
Չինաստան	11,473	2.1 անգամ
Գերմանիա	11,082	11.1%
Ֆրանսիա	11,032	18.9%

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ, արտահանում 2024թ. հունվար–հունիս

Գծապատկեր 5 Ապրանքների արտահանում



Առավելագույն ծավալով 10 ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար



Արտահանումը կազմել է 7,927.5 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա հունվար–հունիսի համեմատ աճելով 2.3 անգամ:

Արտահանվող հիմնական ապրանքներն են հանդիսացել (աճերը բերված են 2023թ. հունվար–հունիսի համեմատ)՝

- **ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ 4,118.7 մլն ԱՄՆ դոլար (աճը 14.7 անգամ):**
- **Ոսկերչական իրեր և դրանց մասեր՝ 709.6 մլն ԱՄՆ դոլար (աճը 18.4 անգամ):**
- **Ադամանդե քար՝ 397.3 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 55.7%):**
- **Հեռախոսային ապարատներ և սարքեր՝ 333.0 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 55.5%):**
- **Պղնձի հանքաքար, կոնցետրանտ՝ 267.6 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 17.1%):**

Վերոնշյալ 5 ապրանքների տեսակարար կշիռը կազմել է կիսամյակային արտահանման ծավալի 73.5%:

Արտահանումն ըստ երկրների

Գծապատկեր 7 Արտահանումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն «Այլ երկրների» գծով (5.5 անգամ): ԱՊՀ երկրներ արտահանումը կրճատվել է -19.5%-ով (որից՝ ԵԱՏՄ՝ -19.7%), իսկ ԵՄ երկրները՝ -25.1%-ով:

Արտահանման գծով հիմնական գործընկեր երկրներ են՝

- Միացյալ Արաբական Էմիրություններ. արտահանումը կազմել է 3,666.6 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 7.8 անգամ,
- Ռուսաստան. արտահանումը կազմել է 1,408.3 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով -21.1%,
- Հոնկոնգ. արտահանումը կազմել է 1322.6 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 17.7 անգամ.
- Չինաստան. արտահանումը կազմել է 714.3 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 3.4 անգամ:

Վերոնշյալ 4 երկրների գումարային արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 89.7%–ը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ, ներմուծում 2024թ. հունվար–հունիս

Գծապատկեր 8 Ապրանքների ներմուծում



Գծապատկեր 9 Առավելագույն ծավալով 10 ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար



Ներմուծումը կազմել է 10.479.7 մլն ԱՄՆ դոլար, 2023թ. հունվար–հունիսի համեմատ աճելով 86.5%–ով:

Ներմուծված հիմնական ապրանքներն են հանդիսացել (աճերը բերված են 2023թ. հունվար–հունիսի համեմատ)՝

- **Ոսկի անշակ, կիսամշակ, փոշի՝ 5,235.4 մլն ԱՄՆ դոլար (աճը 21.3 անգամ):**
- **Հեռախոսային սարքեր և ապարատներ՝ 419.7 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 26.8%):**
- **Ադամանդ՝ 399.6 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 56.0%):**
- **Բնական և հեղուկ գազ՝ 263.6 մլն ԱՄն դոլար (կրճատումը՝ -2.1%):**
- **Մարդատար ավտոմեքենա՝ 260.6 մլն ԱՄՆ դոլար (կրճատվել է 2.9 անգամ):**
- **Նավթ և նավթամթերք՝ 209.7 մլն ԱՄՆ դոլար (կրճատվել է -8.0%):**

Վերոնշյալ ապրանքները կազմել են ընդհանուր ներմուծման 64.8% տոկոսը:

Ներմուծումն ըստ երկրների

Գծապատկեր 10 Ներմուծումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն ԱՊՀ երկրների գծով (4.4 անգամ), որից ԵԱՏՄ-ն՝ 4.5 անգամ: ԵՄ երկրների արտահանումը կրճատվել է -18.5%-ով, իսկ այլ երկրները՝ -16.2%-ով:

Ներմուծման գծով ըստ ներմուծման ծավալում առավելագույն մեծ տեսակարար կշռի հիմնական գործընկեր երկրներ են հանդիսացել

- Ռուսաստան՝ 7,047.7 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 4.7 անգամ,
- Չինաստան՝ 442.8 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը՝ -1.0%,
- Վրաստան՝ 345.7 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը -31.4%,
- Իրան՝ 273.2 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը -7.1%:

Վերոնշյալ երկրների գումարային տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր ներմուծման 77.4%–ը:

Աշխատանքի շուկա, ֆորմալ զբաղվածություն

Գծապատկեր 11 Ֆորմալ զբաղվածություն



2024թ. հունիսի վերջին ֆորմալ զբաղվածների քանակը հասել է 760.2 հազարի, 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.7%.–ով

2024թ. հունիսի վերջի դրությամբ զբաղվածությամբ առաջատար ճյուղերն են հանդիսացել՝

- **մեծածախ և մանրածախ ՝** 129.4 հազար աշխատող,
- **կրթություն՝** 121.9 հազար աշխատող,
- **Մշակող արդյունաբերությունը՝** 89.8 հազար աշխատող,
- Առողջապահություն և բնակչության սոցիալական ապահովություն՝ 52.1 հազար աշխատող,
- տեղեկատվություն և կապ՝ 44.9 հազար աշխատող
- կացություն և հանրային սննդի կազմակերպում՝ 41.2 հազար աշխատող:

2023 թվականի հունիսի համեմատությամբ զբաղվածների թվաքանակի աճ է գրանցվել գրեթե բոլոր ոլորտներում

Գծապատկեր 12 Ֆորմալ զբաղվածություն (առաջատար ոլորտներ))
Հունիս, 2024 տեսակարար կշիռ %



Աշխատանքի շուկա, աշխատավարձ

Գծապատկեր 13 Միջին աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի Հունիս 2024, հազար ՀՀ դրամ



Գրաֆիկ 14 Աշխատավարձի փոփոխությունն ըստ ճյուղերի Հունիս 2024թ. , %



2024թ. հունիսին միջին ամսական աշխատավարձը կազմել է 275,654 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 3.0%–ով, մասնավորապես պետական համակարգում միջին ամսական աշխատավարձը 2024թ. հունիսին կազմել է 215,521 դրամ (+5.7%), իսկ մասնավոր հատվածում՝ 299,395 դրամ (+2.1%).

2024թ. հունիսին բարձր աշխատավարձ ունեցող առավելագույն 3 ճյուղերն են՝

- տեղեկատվություն և կապ 824,100 դրամ,
- հանքագործական արդյունաբերություն՝ 799,925 դրամ,
- ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ 683,061 դրամ:

2023թ. հունիսի համեմատ աճ աշխատավարձի աճ է գրանցվել բոլոր ճյուղերում, բացառությամբ հանքագործական արդյունաբերության և պետական կառավարում ու պաշտպանություն ճյուղերում:
Առավելագույն աճ գրանցվել է հետևյալ ճյուղերում՝

- գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝ +15.3%,
- ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ +12.8%.
- Էլեկտրաէներգիայի, գազի և գոլորշու մատակարարում՝ +10.7%:

Դրամական միջոցների ներհոսք ու փոխարժեք

Գծապատկեր 15 Դրամային փոխանցումներ և փոխարժեք



2024թ. հունվար–հունիսին դրամային փոխանցումների ընդհանուր ներհոսքը կազմել է 2,524.9 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կրճատվելով -13.7% –ով:

Զուտ ներհոսքը կազմել է 595.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կրճատվելով -33.7%–ով:

Դրամային փոխանցումների առավելագույն մասնաբաժինը 2 երկրներից է՝ Ռուսաստան և ԱՄՆ (գումարային տեսակարար կշիռը կազմել է 78.0%):

Գծապատկեր 16 Դրամային հոսքերն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ



Գծապատկեր 17: ՀՆԱ աճի կանխատեսում,%



- Ռուսաստանից դրամային ներհոսքը կազմել է 1,642.0 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–հունիսի համեմատ կրճատվել է -23.0%–ով).
- ԱՄՆ–ից դրամային ներհոսքը կազմել է 325.3 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–հունիսի համեմատ աճել է +5.3%–ով):

Գնաճը Հայաստանում ու աշխարհում



Գծապատկեր 18. Գնաճի մակարդակ 2024թ. հունիսին
տարեկան տոկոսային փոփոխություն

2024թ. 1-ին կիսամյակում ինֆլացիան Հայաստանում մնում է ցածր

Ստորև ներկայացվում է ինֆլյացիան Հայաստանում տարածաշրջաններում՝

- Աշխարհ (162 երկիր)՝ 8.3%
- Ասիա (42 երկիր)՝ 6.5%
- Եվրոպա (46 երկիր)՝ 4.3%
- Հայաստան՝ 0.8%

Գների ինդեքսի միտումը





Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի՝

- Գնաճ՝ 0.8% (2024 թվականի հունիսի համար),
- Աճողական գնաճ՝ -0.6% (2024 թվականի հունվար-հունիսի համար):

Սպառողական գների ինդեքսը ներկայումս ցածր է ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված 4% նպատակային ցուցանիշից:

Հայաստանում ճյուղային գների ինդեքսների մեծ մասը 2024 թվականի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում մնացել է համեմատաբար կայուն՝ ներմուծման և արտահանման ոլորտներում նկատելի բացառություններով: Այս տատանումները հավանաբար պայմանավորված են առաջի կիսամյակի ընթացքում ինֆլյացիայի աճով:

- **Ներմուծման գների ինդեքսը** բացասական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին կիսամյակում ցույց է տվել դրական դինամիկա:
- **Արտահանման գների ինդեքսը** դրական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին կիսամյակում զգալի բացասական տեղաշարժ է տեղի ունեցել: Միաժամանակ նկատվում է արտահանման գների ինդեքսի բացասական ցուցանիշների աստիճանական նվազում, ինչը վկայում է դրական դինամիկայի մասին:

Պետական բյուջե և պարտք

Գծապատկեր 21. Հայաստանի պետական պարտքը, մլն. ԱՄՆ դոլար



Գծապատկեր 22. Հայաստանի բյուջեի եկամուտը ֆ ծախսերը, մլրդ. ՀՀ դրամ



Հայաստանի պետական պարտքը 2024 թվականի հունիսին հասել է 12,157.2 մլն ԱՄՆ դոլարի, որից՝

Արտաքին պարտք՝ 6,245.8 մլն ԱՄՆ դոլար (-3.0% 2023 թվականի հունիսի համեմատ),

Ներքին պարտք՝ 5,911.4 մլն ԱՄՆ դոլար (+26.7% 2023 թվականի հունիսի համեմատ):

Արտաքին պարտքը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- **Պետական պարտք՝** ընդհանուր արտաքին պարտքի 91.9%-ը (-2.6% 2023 թվականի հունիսի համեմատ),
- **Կենտրոնական բանկի պարտք՝** 8.1% от общего внешнего долга (-6.8% 2023 թվականի հունիսի համեմատ):

Հայաստանի բյուջեի եկամուտները 2024 թվականի հունվար-հունիսին կազմել են 1,243.7 մլրդ դրամ (**+7.1%** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Աճը պայմանավորված է հարկերի և տուրքերի մուտքերով, որոնք նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 7.6%-ով՝ հասնելով 1,187.6 մլրդ դրամի:

Պետական ծախսերը 2024 թվականի հունվար-հունիսին կազմել են 1,232.7 մլրդ դրամ (+20.1% 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ). Որից՝

- **Ընթացիկ ծախսեր. ավելացել են** 18.2%-ով (բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, տոկոսների վճարում, դրամաշնորհներ և այլն).
- **Ոչ ֆինանսական ակտիվներ**. աճել են 35.3%-ով (ձեռքբերում և այլ գործունեություն):